# Հետազոտական աշխատանք

*Թեմա՝* *«COVID-19 համավարակի ազդեցությունը կրթության ոլորտի մասնագետների վրա»*

*Կատարող՝* *Հերմինե Ջանջուղազյան Վահագնի*

*Ղեկավար՝* *Ա. Ծատուրյան*

## Բովանդակություն

Նախաբան ..... 3

Մեթոդաբանություն ..... 5

Կրթություն ..... 7

*Հանրակրթության կազմակերպումը Covid-19-ի ժամանակահատվածում* ..... 7

*Կրթության առանձնահատկությունները, դժվարություններն ու դրանց հաղթահարումը համավարակի պայմաններում* ..... 10

*Covid-19-ի պայմաններում արդյունավետ աշխատելու ուսուցիչների կարիքները* ..... 22

*Եզրակացություններ: Հանրակրթության առանձնահատկությունները և կարիքները համավարակի պայմաններում* ..... 32

Առաջարկություններ ..... 35

## Նախաբան

Նոր կորոնավիրուսի (COVID-19-ի) տարածումը կանխարգելելու նպատակով ՀՀ կառավարությունը 2020թ. **մարտի 16-ից** հայտարարեց Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում արտակարգ դրություն մտցնելու մասին: Արտակարգ դրությունը ենթադրում էր մի շարք սահմանափակումներ, որոնցից մեկն էլ վերաբերվում էր ուսումնական գործընթացների կազմակերպմանը.

> «Բոլոր պետական, համայնքային և ոչ պետական հանրակրթական (այդ թվում՝ մանկապարտեզները), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում կարգելվի դասապրոցեսը: Այս արգելքը չի տարածվի հեռավար (օնլայն) ուսուցման վրա»:[1]

Համավարակի հետագա զարգացումը և դրան արձագանքող հարկադիր սահմանափակումները հանգեցրին մի շարք խորքային խնդիրների այլ ոլորտներում ևս, օրինակ՝ ձեռնարկությունների գործունեության դադարեցում, աշխատատեղերի կտրուկ նվազում կամ աշխատաժամանակի կրճատում, արտասահման մեկնելու սահմանափակումներ (օրինակ՝ արտագնա աշխատանքի), որոնք էլ հանգեցրին տնային տնտեսությունների եկամտի նվազմանը: Ստեղծված իրավիճակով պայմանավորված մարտահրավերները հաղթահարելու համար անհրաժեշտ եղավ մշակել և ներդնել նոր ծրագրեր, մոտեցումներ ու գործիքակազմ:

Սույն հետազոտությունը անդրադառնում է կրթության և զբաղվածության ոլորտներում Covid-19-ի ընթացքում ներդրված մեթոդների և գործիքակազմի արդյունավետությանն ու բարելավման հնարավորություններին:

Հետազոտության **օբյեկտը** կրթության և զբաղվածության ոլորտի մասնագետների Covid-19-ով պայմանավորված իրավիճակում գործելու կոմպետենցիաներն են:

---

[1] https://www.gov.am/am/news/item/14122/

Հետազոտության **առարկան՝** ուսուցիչների, Զբաղվածության տարածքային կենտրոնների աշխատակիցների և համապատասխան քաղաքականությունների այլ դերակատարների մասնագիտական կարիքները COVID-19-ով պայմանավորված:

**Հետազոտության նպատակն է** կրթության և զբաղվածության ոլորտների աշխատակիցներին անհրաժեշտ հմտությունների, կարողությունների ու գործիքակազմի բացահայտումը COVID-19-ով պայմանավորված նոր իրականության մեջ աշխատելու/գործելու համար:

**Հետազոտության խնդիրներն են.**

- Ուսումնասիրել ուսուցիչների հեռավար ուսուցմանն անցման փորձը
    - բացահայտել ընթացքում առաջացած դժվարությունները
    - առանձնացնել հեռավար կրթությանն անցման դրական և բացասական կողմերը
    - դուրս բերել դասավանդման ընթացքում անհրաժեշտ, բայց բացակայող հմտությունները և գործիքակազմը:
- Ուսումնասիրել աշակերտների՝ հեռավար ուսուցմանն անցման փորձը
    - բացահայտել ընթացքում առաջացած դժվարությունները
    - առանձնացնել հեռավար կրթությանն անցման դրական և բացասական կողմերը
- Ուսումնասիրել զբաղվածության տարածքային կենտրոնների աշխատակիցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների.
    - աշխատանքի մարտահրավերները և նոր հնարավորությունները COVID-19-ով պայմանավորված իրավիճակում,
    - բացահայտել անհրաժեշտ հմտությունների, կարողությունների և գործիքակազմի բացը:
- Ուսումնասիրել Covid-19-ով պայմանավորված իրավիճակում կթության և զբաղվածության ոլորտում կոմպետենցիաների զարգացմանը միտված ծրագրերի ծածկույթը, արդյունավետությունը և դեռևս չարձագանքված կարիքները:

**Հետազոտության մեթոդը՝** փաստաթղթային վերլուծություններ, փորձագիտական հարցազրույցներ, ֆոկուս խմբային քննարկումներ:

## Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է 2021 թվականի հոկտեմբեր ամիսին Երևանում։ Այն ընդգրկել է կրթության ոլորտը՝ կենտրոնանալով COVID-19-ով պայմանավորված իրավիճակում աշխատաշուկայում պահանջարկ ունեցող հմտությունների բացահայտման և գնահատման վրա։

Գնահատման ընթացքում կիրառվել է որակական հետազոտման մեթոդ՝ հենվելով առաջնային և երկրորդային տվյալների վերլուծության վրա։

Առաջնային տվյալները հավաքվել են խորքային հարցազրույցների և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով։ Խորքային հարցազրույցներ վարվել են կրթության և զբաղվածության ոլորտի քաղաքականություն մշակողների և ակտիվ դերակատարների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այն կառույցների ներկայացուցիչների հետ, որոնք կրթության և զբաղվածության ոլորտների վրա Covid-19-ի ազդեցության հետևանքների վերացմանն ուղղված ծրագրեր են իրականացրել։ Ընդհանուր թվով իրականացվել է այդպիսի 11 հարցազրույց։

Ֆոկուս խմբային քննարկումներ են իրականացվել աշակերտների, ուսուցիչների, Զբաղվածության տարածքային կենտրոնների աշխատակիցների հետ։ Ընդհանուր թվով իրականացվել է 11 ֆոկուս խմբային քննարկում՝ ապահովելով 2 սեռերի և տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների ընդգրկվածություն, ուսուցիչների դեպքում նաև՝ տարբեր հոսքերի առարկայական մասնագետների ներգրավվածություն։

Որպես երկրորդային տվյալների աղբյուր է հանդես եկել նորմատիվաիրավական ակտերի, տեղական և միջազգային կառույցների կողմից իրականացված հետազոտությունների, մեդիա հրապարակումների և հոդվածների վերլուծությունը, ինչպես նաև COVID19-ով պայմանավորված նոր իրականությանը հարմարվելուն նպատակաուղղված նույն թիրախ խմբերին աջակցող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը։

Որպես երկրորդային տվյալների աղբյուր է հանդես եկել նորմատիվաիրավական ակտերի, տեղական և միջազգային կառույցների կողմից իրականացված հետազոտությունների, մեդիա հրապարակումների և հոդվածների վերլուծությունը, ինչպես նաև COVID19-ով պայմանավորված նոր իրականությանը  հարմարվելուն նպատակաուղղված նույն թիրախ խմբերին աջակցող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը։

## Կրթություն

### *Հանրակրթության կազմակերպումը Covid-19-ի ժամանակահատվածում*

ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածը նախատեսում է կրթության իրավունքը. յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:[2] Երեխաների կրթության իրավունքի ապահովումը պետության հիմնաքարային լիազորություններից մեկն է: Կրթության ոլորտը կարգավորվում է ինչպես ներպետական, այնպես էլ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով: Օրենքով սահմանվում են պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը, պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթության անվճար լինելը: Պետությունը, հանդիսանալով կրթության հիմնական պատասխանատուն, պետք է խթանի կրթության զարգացումը և համապատասխանեցումը ժամանակի մարտահրավերներին: Պետական լիազոր մարմինները պետք է ստեղծեն և ապահովեն անհրաժեշտ կրթակարգեր, ծրագրեր և միջավայր երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման, մտավոր և ֆիզիկական ունակությունների կատարելագործման համար:

2020թ.-ի մարտի 16-ին ՀՀ Կառավարության 298Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց արտակարգ դրություն՝ կապված ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման հետ:[3] Արտակարգ դրությունից հետո ընկած ժամանակահատվածում հանրակրթության մեջ և դպրոցների կյանքում բազմաթիվ փոփոխություններ և նորամուծություններ եղան, որոնք, բնականաբար, իրենց ազդեցությունը թողեցին, թե ուսումնական գործընթացի և արդյունքների, թե կրթության մեջ ներգրավված հիմնական կողմերի վրա:

2020թ. մարտի 13-ին ՀՀ Կառավարությունում կայացած ընդլայնված խորհրդակցությունից հետո ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ա. Հարությունյանը ֆեյսբուքյան ուղիղ եթերի ժամանակ տեղեկացրեց դասերը դադարեցնելու մասին: Սա պայմանավորված էր կորոնավիրուսի տարածման կանխարգելման միջոցառումների անհրաժեշտությունով և ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված ցուցումներով: ԿԳՄՍ նախարարը կոչ արեց բոլոր կրթական, մշակութային և մարզական կազմակերպություններին ինքնակազմակերպվել, մշակել գործուն և հնարավորինս արդյունավետ մեխանիզմներ

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
[3] https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/

ոչ միայն կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու համար, այլև նշված օրերին ուսումնական գործընթացը հեռավար եղանակով կազմակերպելու գործում:[4]

Արդեն մարտի 18-ին նախարարությունը հայտարարեց հեռավար ուսուցմանն անցնելու փորձնական ծրագրի մասին: Ուսումնական հաստատություններում անցումը հեռավար կրթությանը անսպասելի էր և իր բնույթով նորարար, ուստի արտակարգ դրության ժամանակահատվածում հրապարակվեցին դրա վերաբերյալ տեղեկատվական նյութեր և օրենսդրության մեջ կատարվեցին որոշակի փոփոխություններ ու լրացումներ: Հեռավար կրթության վերաբերյալ օրենսդրությունն ամրագրում է որոշակի կարգավորումներ:

Հանրակրթության մասին ՀՀ օրենքում տրվում է հեռավար (դիստանցիոն) կրթության հասկացությունը. կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով:

Հեռավար ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հեռավար դասընթացների նախագծման և իրագործման հիմքն են: Հեռավար ուսուցումը դիտվում է որպես ուսուցման ինքնուրույն ձև, այն չի կարող իրականացվել ուսուցման ավանդական ձևերով: Հեռավար ուսուցման և առկա ու հեռակա ուսուցման ձևերի համեմատությունը ցույց է տալիս, որ հեռավար ուսուցումը կարելի է դիտել որպես առկա ու հեռակա ուսուցման զարգացման նոր աստիճան, որը հնարավորություն է ընձեռում կիրառելու տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ՝ հիմնված անձնական համակարգիչների, վիդեո և աուդիոսարքավորումների, կամ այլ տեխնիկայի օգտագործման վրա: Հեռավար ուսուցման տարբերությունն առկա ուսուցումից այն է, որ նյութի էական մասը յուրացվում է ոչ թե լսարանում, այլ համացանցային տեխնոլոգիաների միջոցով, այսինքն՝ հեռավար ուսուցմամբ սովորողների աշխատանքը կազմակերպվում է հիմնականում ինքնուրույն:[5]

---

[4] https://www.facebook.com/arayik.harutyunyan/videos/10158097912233501/?t=3

[5] https://www.isec.am/images/heravar_karger/Metodabanakan_uxecuyc.pdf?fbclid=IwAR35ciee8FGiuWTQPsGbavUd-_P44EaQU9gYMP4qkAAFVbEHjoYF3u9fmf8

2020թ.-ի մայիսի 20-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից արձակվեց N09-ն հրամանը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը հաստատելու մասին: Համաձայն կարգի՝ հեռավար կրթության հիմքը կազմում են տեղեկատվական տեխնոլոգիաները և հեռահաղորդակցության միջոցները: Թույլատրվում է տեղեկատվական և հեռահաղորդակցային տարբեր տեխնոլոգիաների զուգակցումը:[6]

Ուսուցման գործընթացը հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար տարբերակով կազմակերպվեց մինչև 2019-2020 ուսումնական տարվա ավարտը: Արդեն նոր ուսումնական տարում ուսումնական գործընթացը մեկնարկեց 2020 թվականի սեպտեմբերի 15-ից՝ առկա ուսուցմամբ: ԿԳՄՍ նախարարությունը հրապարակեց Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույց:[7] Ուղեցույցը սահմանում է համավարակի պայմաններում դպրոց հաճախելուն ներկայացվող պահանջները, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման կարգը, դասարանների կազմակերպման և դասերի անցկացման առանձնահատկությունները: Դպրոցներն անցան 6-օրյա աշխատանքային ռեժիմի. 20-ից ավել աշակերտ ունեցող դասարանները կիսվեցին և սկսեցին դասապրոցեսը կազմակերպել երկու օրը մեկ անգամ՝ երկու հերթափոխով:

Բացառվեց սովորողի հաճախումը դպրոց, եթե

ա) սովորողն ունի կորոնավիրուսային հիվանդության ռիսկի խմբի հիվանդություններից որևէ մեկը՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված ցանկի,

բ) տանն առկա է կամ հայտնաբերվել է կորոնավիրուսային հիվանդության ախտանիշներով կասկածելի կամ հաստատված հիվանդ,

գ) տանն առկա է կորոնավիրուսային հիվանդության ռիսկի խմբի ընտանիքի անդամ, և առկա է համապատասխան ցուցում բժշկական հաստատության կողմից:

[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143349
[7] https://escs.am/am/news/6953

Վերոնշյալ դեպքերում ուսուցումը կազմակերպվում է հեռավար կամ տնային ուսուցման եղանակով: Հեռավար եղանակով ուսուցումը կազմակերպվում է կենտրոնացված՝ առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 20 մայիսի 2020թ. N09-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգով: Դպրոցը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) Հեռավար ուսուցման կենտրոն է ներկայացնում այն սովորողների տվյալները, որոնց ցուցված չէ դպրոց հաճախելը: Վերջինս իրականացնում է հեռավար ուսուցումը այս աշակերտների համար:

## *Կրթության առանձնահատկությունները, դժվարություններն ու դրանց հաղթահարումը համավարակի պայմաններում*

Արտակարգ դրության մտցվելուց հետո հեռավար աշխատանքի են անցան նաև ԿԳՄՍ նախարարության և վերջինիս բաղադրիչը հանդիսացող ստորաբաժանումների ու ենթակայության հիմնարկների աշխատակիցները: Հետազոտության շրջանակներում ներգրավված մասնագետները առաջ են քաշում մի շարք խնդիրներ, որոնցից աշխատանքի արդյունավետությունը նվազել է: Հեռավար աշխատանքը ազդել է աշխատակիցների արդյունավետ հաղորդակցման և համատեղ աշխատանքի վրա: Փաստաթղթաշրջանառությունը թերի է իրականացվել, քանի որ կան փաստաթղթեր, որոնք չեն տեղափոխվում այլ վայր և հեռավար աշխատանքի դեպքում վերջիններիս հետ աշխատանքը կիսատ է մնացել: Աշխատանքում որևէ նոր գործիքակազմ, ծրագրային ներդրում չի իրականացվել, օգտագործվել է այն, ինչ եղել է նաև մինչ համավարակը, միայն ավելացել են էլեկտրոնային նամակագրությունը և հաճախակի կազմակերպվող տեսահանդիպումները: Համավարակի պայմաններում նաև դադարեցվել է քաղաքացիների ընդունելությունը, դա իրականացվում է միայն դիմումների տեսքով:

ԿԳՄՍ նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ) ՊՈԱԿ-ում համավարակը պատճառ հանդիսացավ, որ ավելի արագ զարգացնեն նախկինում մեկնարկած հեռավար ուսուցման մի շարք ծրագրեր: Ավելի ընդլայնվել են աշխատանքի ծավալները, քանի որ ավելի շատ թվով ուսուցիչներ են ցանկացել վերապատրաստվել և սովորել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) գործիքակազմ, անհամեմատ աճ է նկատվել ծրագրերով

հետաքրքրվածության, հատկապես համավարակի պատճառով հեռավար ուսուցմանն անցման առաջին մի քանի ամիսներին (2020 թ. մարտ, ապրիլ, մայիս): ԿՏԱԿ-ում ևս անցում է կատարվել հեռավար աշխատանքի, սակայն քանի որ նախկինում ևս վերապատրաստումները կատարվել են հեռավար, իրենց կողմից վերապատրաստումներ անցնողները (ուսուցիչները) որևէ տարբերություն չեն նկատել.

***«Իրենք չգիտեին՝ մենք տանից ենք միանում վերապատրաստմանը, թե աշխատավայրից, իրենց հետ մինչ համավարակն էլ աշխատել ենք հեռավար»:***

***Հարցազրույցի մասնակից, ԿՏԱԿ, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի վերապատրաստող մասնագետ***

Ռիսկային խմբում գտնվող աշակերտների հեռավար ուսուցումը այժմ էլ իրականացվում է ԿՏԱԿ-ի մասնագետների կողմից, որոնք դասավանդում են առաջինից տասներկուերորդ դասարանների բոլոր առարկաները: Այս դասերին աշակերտները միանում են մեկ համընդհանուր հարթակում, անկախ մարզից և դպրոցից բոլոր ներգրավվածները մեկ համընդհանուր դասի են մասնակցում:

Անսպասելի և արագ անցումը հեռավար աշխատանքի ցնցումային և տրավմատիկ էր ոլորտի աշխատակիցների համար, ինչպես հոգեբանական, այնպես էլ աշխատանքի կազմակերպման տեսանկյունից: Հարցազրույցների մասնակիցները, մասնավորապես, նշում են սկզբնական շրջանում աշխատանքային օրը տանից պլանավորելու և ժամանակը ճիշտ տնօրինելու հետ կապված խնդիրները: Ուսուցիչների դեպքում դժվար են նաև նոր մեթոդներով և անծանոթ գործիքներով աշխատելը, դրանց չտիրապետելը:

Հեռավար ուսուցման արդյունավետ կազմակերպման համար սկսեցին ստեղծվել էլեկտրոնային տարբեր հարթակներ, որտեղ հնարավոր կլիներ գտնել կրթական պրոցեսի համար նախատեսված տարբեր մեդիա նյութեր, էլեկտրոնային գրականություն և այլն: Առավել նշանակալի հարթակներից է ԿԳՄՍ նախարարության կողմից ստեղծված «heravar.armedu.am» հեռավար ուսուցման համալիր հարթակը, որտեղ մեկտեղված են կրթական տարբեր էլեկտրոնային աղբյուրներ:[8] Սակայն

[8] **Covid-19 համավարակի հասարակական, տնտեսական և իրավական դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ, Երևան 2020, էջ 27**

հետաքրքրական է, որ մեր իրականացրած ֆոկուս խմբերին մասնակցած ուսուցիչներից և ոչ մեկը իր խոսքում չի հիշատակել այս հարթակը:

Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած ուսուցիչներից շատերը նախարարի ֆեյսբուքյան էջից են տեղեկացել, որ անցում է կատարվելու հեռավար կրթության, շատերի մոտ խուճապ և անհանգստություն է առաջացել, որ չեն կարողանա անցկացնել դասը հեռավար եղանակով: Ուսուցիչներից ոչ բոլորն էին պատրաստ հեռավար կրթության անցմանը, շատերը չունեին տեխնիկական հնարավորություններ՝ համապատասխան սարքեր և ինտերնետ: Նրաք սկսել են օգտագործել այնպիսի հարթակներ, որոնց և իրենք էին նոր ծանոթանում և աշակերտները ու նրանց ծնողները:

*Ուսուցիչը մնաց մենակ, չեղավ օգնություն ոչ տեխնիկական, ոչ մեթոդական առումով: Ովքեր տեխնիկա չունեին, միևնույնն է այդ խնդիրը չլուծվեց: Անսպասելի էր, ով ինչքանով կարողացավ աշխատեց, դասն անցկացրեց այնքանով, ինչքանով կարողացավ:*

*Ֆոկուս խմբի մասնակից ուսուցիչ*

Բոլորին թվում էր ստեղծված իրավիճակը ժամանակավոր է և շուտով կանցնեն բնականոն ռեժիմի: Առնվազն երկու շաբաթ անցավ, մինչ դպրոցներում հարաբերականորեն կայուն համակարգ ու մեխանիզմ ստեղծվեց հեռավար դասեր անցկացնելու համար: Յուրաքանչյուրը ներդրեց իր իմացած, իրեն հարմար ծրագիրը, նույնիսկ միևնույն դպրոցի նույն դասարանի երկու տարբեր ուսուցիչներ օգտագործում էին տարբեր հարթակներ: Դա պայմանավորված էր թե՛ իրենց իմացությամբ, և՛ թե սովորողների կարողություններով և նրանց համար մատչելիությամբ: Առաջին հարթակները, որ սկսեցին օգտագործել viber, whatsapp, messenger հավելվածներն էին, որոնք հնարավորություն տվեցին հեռախոսահամարների միջոցով արագ ներգրավել երեխաներին: Աստիճանաբար յուրաքանչյուր ուսուցիչ, իր իմացության և որոնողական հմտությունների շնորհիվ, ներդրեց տարբեր այլ հարթակներ, գործիքներ ու մեթոդներ: Ստացվում էր այնպես, որ ամեն ուսուցիչ կարող էր մի հարթակ առաջարկել և մի հավելված պահանջել, որպեսզի աշակերտները ներբեռնեն: Շատ աշակերտներ հեռախոսների հիշողության հետ կապված ևս տեխնիկական խնդիրներ էին ունենում, ինչը լրացուցիչ խոչընդոտ էր ստեղծում ուսման գործընթացում:

Համադրելով հետազոտության տարբեր աղբյուրներից ստացված արդյունքները՝ կարող ենք նշել, որ ուսուցիչներից շատերը չեն տիրապետում ՏՀՏ գործիքակազմին և

մեդիագրագետ չեն: Շատերը տեղյակ չէին՝ ինչ ասել է հեռավար ուսուցում, չէին պատկերացնում դրա կազմակերպումը, ժամանակացույցը, տարբերությունները առկա ուսուցումից: Ավելի երիտասարդ կամ ՏՀՏ-ում ավելի արագ կողմնորոշվող և փորձառու ուսուցիչները իրենց վրա վերցրել էին մյուսներին աջակցելու և սովորեցնելու մեծ պատասխանատվություն:

***Շատ վատ էր, մեր հասարակությունը դրան պատրաստ չէր…, էդ երեխեքը պատկերացում չունեին, մենք պատկերացում չունեինք: Ես դրա կարիքը չեմ ունեցել, որ իմանամ, ու միանգամից օնլայն դասեր, նախ պետք է վերապատրաստում անցնեինք, որևէ բան չի կազմակերպվել:***

***Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ուսուցիչ***

Առցանց ուսուցումը դարձավ ուսուցում «առանց ժամ ու պատարագի». Բացի բուն դասապրոցեսը, ուսուցիչները սկսեցին իրականացնել իրավիճակով պայմանավորված այլ գործառույթներ: Նրանք ստիպված եղան աջակցել աշակերտներին առցանց հարթակների հետ կապված խնդիրներում, ավելի երկար ժամանակ ծախսել դասին պատրաստվելու, հետադարձ կապի, կազմակերպչական աշխատանքների և թղթաբանության վրա, քանի որ հմուտ չէին առցանց գործիքներով աշխատելիս, իսկ դա անում էին իրենց և իրենց ընտանիքի անձնական ժամանակի հաշվին. *«Աշակերտները գիշերն էլ էին տնային ուղարկում և դու ստիպված էիր ստուգել, պատասխանել, գոնե մի հատ բութ (like) դնել»,-* ֆոկուս խմբային քննարկման մասնակից ուսուցիչ: Դասապրոցեսը հեռավար կազմակերպելու արդյունքում ընտանիքում ևս խնդիրներ էին առաջանում, քանի որ ստիպված էին ընտանիքի անդամները լռել՝ դասապրոցեսի ժամանակ աղմուկ չլինելու համար: Ուսուցիչները դասերը վարելիս հաճախ կաշկանդվում էին, քանի որ հեռավար դասի ժամանակ միայն աշակերտը չի լսում, այլ նաև աշակերտի ընտանիքի անդամները: Տուժում էին ուսուցիչների երեխաների դասերը, հատկապես տարրական դպրոցում, երբ երեխան, չկարողանալով օգտվել համակարգչային տեխնիկայից, կարիք ուներ ավելի շատ աջակցության, բայց ծնողը իր դասերն էր վարում՝ երեխային անուշադրության մատնելով:

***«1-ին դասարանից հեռախոսը տվեցի աղջկաս ձեռքը, էդքան ասում ենք վնաս է, բայց ստիպված ինքներս տվեցինք ձեռքը»:***

***Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ուսուցիչ - ծնող***

Չնայած ծառայությունների թվային ռեժիմին անցնելու՝ պետության և համայնքային համակարգերի ջանքերին, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների, ենթակառուցվածքի և սարքավորումների պակասը քաղաքային և գյուղական տարածքներում բնակվող շատ երեխաների թույլ չի տվել մասնակցել առցանց դասընթացներին: Համակարգիչների և ինտերնետի սահմանափակ հասանելիությունը նոր թվային անջրպետ է ստեղծել և՛ քաղաքային, և՛ գյուղական համայնքներում:[9]

Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության կողմից Հայաստանում երեխաների և ընտանիքների բարեկեցության վրա COVID-19-ի բռնկման ազդեցության գնահատման տվյալներով տնային տնտեսությունների 13.8%-ում դպրոցահասակ երեխաները չեն հաճախել առցանց դասերի, որոնցից 78.7%-ը չի հաճախել ինտերնետ կապի բացակայության պատճառով, 88%-ը՝ տեխնիկական սարքավորումների բացակայության/պակասի պատճառով:[10]

Սոցիալ-հոգեբանական բնույթի բազմաթիվ խնդիրներ առաջացան ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների մոտ: Դրանցից էր տեխնիկական հնարավորությունների բացակայությունը: «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամում նախաձեռնեցին դրամահավաք և իրենց շահառու բոլոր դպրոցներին տրամադրեցին սարքավորումներ և ինտերնետային կապ: Դպրոցներն իրենց հերթին տրամադրում էին դպրոցում առկա սարքերը, ինչը սակայն չէր հասնում բոլոր կարիք ունեցողներին: Սոցիալական ծանր պայմաններում ապրող ընտանիքների համար սարքը ստանալուց բացի խնդիր էր նաև ինտերնետային կապի ապահովում: Կան ընտանքիներ, որոնք մի քանի դպրոցահասակ երեխա ունեն և ընդամենը մեկ սարք, խնդիր էր առաջանում միաժամանակ դասերին մասնակցելու տեսանկյունից թե՛ տեխնիկական միջոցի պատճառով, և թե՛ միմյանց ֆիզիկապես խանգարելու պատճառով՝ կապված բնակարանային սուղ պայմանների հետ: Այս ամենը հանգեցնում էր նաև հոգեբանական խնդիրների, հատկապես, երբ ուսուցիչը պարտադրում էր աշակերտներին միացնել տեսախցիկը, իսկ վերջինս չէր ուզում ի ցույց դնել իր տնային պայմանները: Առաջ էին գալիս անձնական տարածք ունենալու խնդիրներ թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների և թե՛ նրանց ընտանիքների անդամների մոտ: Հոգեբանական խնդիրներից էր նաև միմյանց հետ իրական շփման

[9] COVID-19 ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ, ՄԱԶԾ, ՀԱՅԱՍՏԱՆ 2020, էջ 48

[10] Հայաստանում երեխաների և ընտանիքների բարեկեցության վրա COVID-19-ի բռնկման ազդեցության գնահատում, Վորլդ Վիժն Հայաստան

սահմանափակումը, որը հատկապես իր ազդեցությունը թողեց ավագ դպրոցականների շրջանում: Ուսուցիչներից ոմանք նշում են, որ իրենց աշակերտների անուններն անգամ չեն հիշում, ինչը պայմանավորված է հեռավար ուսուցումով, իսկ ներկայումս առկա ուսուցման պարագայում՝ դասերը խտացնելով ու ավելի քիչ հանդիպելով, ինչպես նաև թղթային մատյան չունենալով:

Անցումը հեռավար կրթությանը անսպասելի էր ու անհանգստացնող նաև սովորողների համար, քանի որ նրանք պատկերացում չունեին՝ ինչ ասել է թե հեռավար ուսուցում: Աշակերտների մի մասի գիտելիքների վրա հեռավար ուսուցումը անդառնալի հետևանքներ է թողել: Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած աշակերտները փաստում են, որ նրանց դասընկերների մեծամասնությունը այդպես էլ չմիացավ դասերին, իսկ միացողների շատ քիչ մասն էր լիարժեքորեն և ակտիվությամբ մասնակցում, մյուսները հաճախ տեխնիկական խնդիրներ էին ունենում: Թեպետ հարկ է նշել, որ սովորողների մի մասն օգտվել են ընձեռնված հնարավորությունից՝ ինքնակրթվել ու զարգացրել տարբեր հմտություններ:

*Ես համարում եմ, որ մենք կրթական համակարգ չունենք, դրա համար ուրախացա, քանի որ դպրոցում մեր մտածողությունը փակում են, անիմաստ բաներ են սովորացնում, եթե դու կարողանում ես ինքնակրթվես, կարող ես դասը միացնել ու ուրիշ բաներով զբաղվես, քեզ պետքական գիտելիք սովորես, գրքեր կարդաս, սպորտով զբաղվես. . . սա լավ հնարավորություն էր:*

*Ֆոկուս խմբային քննարմկման մասնակից, 11-րդ դասարանի աշակերտ*

Շատ աշակերտներ հեռավար դասերի ժամանակ կարողանում էին դասը պատասխանելիս կամ առաջադրանքը կատարելիս ավելի բարձր գնահատական ստանալ, եթե նույնիսկ լավ չէին պատրաստվել, գտնում էին ելք որևէ կերպ գրքից օգտվելու: Թերևս աշակերտները համարում են, որ չնայած հեռավարի ժամանակ ավելի բարձր գնահատականներ էին ստանում, դպրոցում, առկա սովորելով ավելի լավ գիտելիքներ կստանային: Սովորողները հիմնականում առանձնացնում են տեխնիկական բնույթի խնդիրները՝ հոսանքի և ինտերնետ կապի տատանումներ, տեսախցիկի և բարձրախոսի հետ կապված խնդիրներ, օգտագործած ծրագրերի անհամատեղելիություն իրենց հեռախոսի հետ, որոնց պատճառով խախտվում էր դասի ամբողջականությունն ու արդյունավետությունը: Մեծամասամբ աշակերտները կարծում են, որ առկա դասերը ավելի մատչելի են, երբ ուսուցիչը տեղում դասը բացատրում է, քան երբ հեռախոսով են դասը լսում:

Ինչպես նշվեց, ուսուցիչների և աշակերտների մոտ նկատվում է նաև մեդիագրագիտության և համացանցային անվտանգության վերաբերյալ գիտելիքների բաց: Հաճախ դասերի հղումները տեղադրվում էր հանրային տարբերակով: Եղել են դեպքեր, երբ կողմնակի մարդիկ են միացել և փորձել խանգարել, երբեմն էլ աշակերտներն են որոշակի «չարաճճիություններ» արել:

***Մեր դասընկերներից մեկը Արայիկ Հարությունյանի անուն ազգանունով ու նկարով էր միացել դասին, և ուսուցիչները կարծում էին մտել ա իրենց ստուգի:***

***Ֆոկուս խմբային քննարկման մասնակից, 12-րդ դասարանի աշակերտ***

Կարելի է փաստել, որ հեռավար ուսուցումը շատ ուսուցիչների հնարավորություն ընձեռեց զարգացնել սեփական հմտությունները, ուսուցիչները սկսեցին սովորել և փնտրել նոր գիտելիքներ ու գործիքներ, սկսեցին իրար օգնել, փոխօգնությունն աճեց: Հեռավար կրթությունը հնարավորություն տվեց նաև, որ ծնողներն ավելի շատ ներգրավվեն իրենց երեխաների կրթության մեջ, ավելի շատ սկսեցին հետևել իրենց երեխաների դասերին, ծնող-աշակերտ-ուսուցիչ կապն ավելի սերտ դարձավ: Քանի որ սովորելու հաջողությունը ավելի շատ էր կախված աշակերտի ինքնուրույն աշխատելուց, ուսուցիչները նաև բացահայտեցին իրենց որոշ «պասիվ» աշակերտներին, որոնք սովորաբար այդքան էլ ակտիվ չեն և լռակյաց են դպրոցում, սակայն հեռավար դասերի ժամանակ լավագույնս դրսևորեցին իրենց. ակտիվությամբ և պարտաճանաչորեն պատրաստվում էին դասերին, ինչը հնարավորություն տվեց բացահայտել նրանց ունակությունները: Ներառական կրթության ծրագրով սովորող որոշ աշակերտների մոտ ևս առաջընթաց է նկատվել, քանի որ ծնողի անմիջական վերահսկողության և աջակցության ներքո են եղել: Սակայն հիմնական օրինակներում չի հաջողվել պատշաճ կազմակերպել այս երեխաների ուսուցումը հեռավար՝ անկախ կիրառած գործիքներից: Վորլդ Վիժնի իրականացրած Հայաստանում երեխաների և ընտանիքների բարեկեցության վրա COVID-19-ի բռնկման ազդեցության գնահատման տվյալներով՝ տնային տնտեսությունների 28.6%-ում հաշմանդամություն ունեցող աշակերտները չեն մասնակցել առցանց դասերի, որոնցից 55.1% դեպքերում Անհատական կրթական պլանը (IEP) չի պահպանվել, ինչպես կազմվել է մինչև արտակարգ դրությունը: 77.6% դեպքերում Անհատական կրթական պլանի նպատակները չեն վերանայվել COVID-19 համաճարակային ժամանակահատվածում:[11] Ի տարբերություն առկա ուսուցման, երբ ներառական

[11] Հայաստանում երեխաների և ընտանիքների բարեկեցության վրա COVID-19-ի բռնկման ազդեցության գնահատում, Վորլդ Վիժն Հայաստան

կրթություն ապահովելու համար ուսուցչին զուգահեռ աշակերտների հետ աշխատանքում ներգրավված են նաև հոգեբանը և ուսուցչի օգնականը, հեռավար ուսուցման պարագայում էկրանից այն կողմ աշակերտների հետ աշխատել է միայն ուսուցիչը: Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների համար հեռավար կրթության կազմակերպման դժվարությունները, մեթոդական առանձնահատկություններն ու կիրառվող գործիքակազմի համապատասխանությունը չի հանդիսացել սույն հետազոտության հիմնական առարկա և չի ուսումնասիրվել: Շատ կարևոր է այս ոլորտի կարիքների վերհանումը ևս, ուստի անհրաժեշտ է առանձին մեթոդաբանությամբ հետազոտության իրականացում:

Մինչ նոր ուսումնական տարվա մեկնարկը (2020թ. սեպտեմբեր) հեռավար կրթությունը կազմակերպվեց տարերայնորեն, առանց կոնկրետ համակարգերի ներդրման: Բացի վերը նշված viber, whatsapp, messenger առցանց շփման հավելվածները, ուսուցիչները, իրենց կարողությունների սահմանում, կիրառեցին նաև այլ գործիքներ: Ամենահաճախակի նշված հարթակը, որ օգտագործել են առցանց դասերը կազմակերպելու համար, Zoom-ն է: Կարծիքները միանշանակ չեն, մասնագետների մի մասը խնդիրներ է ունեցել և հրաժավել, մյուս մասը արդյունավետորեն օգտագործել է հարթակի ընձեռած գործիքակազմը: Զուգահեռ օգտագործել են մի շարք այլ հարթակներ ու գործիքներ, մասնավորապես՝

- Google գործիքները, հիմնականում Search, Slids, Docs, Form, Drive, Classroom՝ պրեզենտացիաներ, հարցումներ, թեստեր պատրաստելու, հանդիպումներ կազմակերպելու համար, թեմայի հետ կապված հետաքրքիր նյութեր և նկարներ որոնելու, միմյանց փոխանցելու և պահելու համար, Google Maps-ը օգտագործեցին աշխարհագրության դասերին:
- Youtube –ը՝ տեսահոլովակների, տեսադասերի որոնման, դիտման համար:
- Kahoot.com-ը, որը խաղային հիմքով ներգրավման հարթակ է, օգտագործել են գիտելիքի ստուգման հարցաշարեր կազմելու համար:
- Quizizz.com-ը, որը իր տեսակով շատ նման է նախորդ հարթակին, օգտագործել են տարբեր վարժանքներ կատարելու, գիտելիքն ամրապնդելու համար:

ԿՏԱԿ-ի կողմից ներդրվել է երեք մեթոդով դասի մատուցման հնարավորություններ՝ նկարահանված տեսադասեր, վեբինարներ, որոնց ժամանակ աշակերտներն տեսազանգի միջոցով են սովորում, և էլեկտրոնային տարբեր նյութեր, որոնք տրամադրվում են առաջադրանքների տեսքով: Արդեն սեպտեմբեր ամսին

ներդրել են Microsoft Teams ծրագիրը, որը անվճար տրամադրվել է բոլոր դպրոցներին՝ խորհուրդ տալով աշխատել դրանով, քանի որ ծրագիրը միաժամանակ ունի տեսազանգի, արագ հաղորդագրության, առաջադրանքներ տեղադրելու և այլ հնարավորություններ: ԿՏԱԿ-ի կողմից կազմվել են տեսադասեր՝ ինչպես օգտագործել Microsoft Teams-ը, Goolge classrom-ը, ինչպես նաև ուսումնառության համընդհանուր դիզայնի սկզբունքների և գաղափարախոսության մասին:

Հատկանշական է, որ Microsoft Teams-ի հետ կապված ուսուցիչները տարբեր կարծիքներ ունեն, ըստ նրանց իրենք արդեն հմտացել էին այս կամ այն գործիքի կիրառման մեջ և հեռավար դասերն բնականոն ընթացքի մեջ էին, երբ ԿԳՄՍ նախարարության կողմից պարտադրվեց ծրագիրը: Նրանք նշում են, որ ծրագիրը ծանր է և հիմնականում անհամատեղելի հեռախոսների հետ:

***Zoom-ին մի քիչ սովորել էինք, հիմա էլ պարտադրեցին, որ Teams-ն օգտագործենք:***

***Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ուսուցիչ***

Կարելի է եզրակացնել, որ տվյալ հարթակը հավանել կամ չհավանելը հիմնականում պայմանավորվել է ոչ թե վերջինիս ընձեռած հնարավորություններով, գործիքակազմով, այլ ուսուցչի ունեցած լավ կամ վատ փորձառությամբ, ինչպես նաև հարթակից օգտվելու հմտությունով:

Ուսուցիչներն ու աշակերտները արձանագրում են «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ի (emis.am) էլեկտրոնային մատյանի հետ կապված ծրագրային խնդիրները, մասնավորապես՝ գնահատականների չպահպանման կամ կրկնակի նշման, սովորողների տվյալների անհետացման հետ կապված: Էլեկտրոնային մատյանի պարագայում, նշում են, որ դասղեկները չեն կարողանում հետևել աշակերտների բացակայություններին ու առաջադիմության խնդիրներին և պատշաճ կապ պահել ծնողների հետ:

Ավագ սերնդի ուսուցիչներ կան, որ այդպես էլ չեն սովորել ու արդյունավետորեն չեն կիրառել ՏՀՏ գործիքներն ու հարթակները: Լոռիում նրանցից ոմանք պարբերաբար աշակերտների հետ դեմ առ դեմ հանդիպումներ են ունեցել՝ աշխատելով պահել հակահամաճարակային կանոնները:

Ըստ աշակերտների՝ պատմողական առարկաները շատ ավելի հեշտ էր անցկացնել հեռավար, քան բնագիտական առարկաները, հատկապես մաթեմատիկան:

Պատմողականները գրեթե նույն ոճով են կազմակերպել, ինչպես դպրոցում: Շատ քիչ դեպքերում ավելի արդյունավետ է եղել, քանի որ դասասենյակում տեխնիկական միջոցներ չկան, իսկ առցանցի դեպքում ուսուցիչները որոշ նկարներ կամ հոլովակներ են ցուցադրել: Մաթեմատիկան ամենադժվարն է տրվել, փորձել են առցանց գրատախտակն օգտագործել, բայց տեխնիկական խնդիրներ են եղել, ավելի ժամանակատար է եղել, այդ իսկ պատճառով հաճախ պարզապես թղթի վրա են գրել, հետո տեսախցիկով ցույց տվել: Առանձին դեպքերում այս կամ այն առարկան ավելի հետաքրքիր է դասավանդվել՝ կախված ուսուցչից, եթե նա կիրառել է խաղեր, տեսահոլովակներ, սլայդներ կամ վիկտորինաներ (quiz): Ամենաանարդունավետը, այդուհանդերձ, տարրական դասարանների ուսուցումն է կազմակերպվել (ըստ ուսուցիչների), քանի որ տարիքային առանձնահատկություններից ելնելով աշակերտներն ավելի շատ ունեն ուսուցչի ներգրավման, միջամտության, ֆիզիկական ներկայության կարիքը:

Հետաքրքրական է, որ ֆոկուս խմբերին մասնակցած աշակերտների մեծ մասը ուսուցչի՝ առցանց գործիքներին տիրապետելը կամ հետաքրքիր ու արդյունավետ դասեր անցկացնելը չի վերագրում վերջինիս տարիքին կամ դասավանդած առարկային: Նրանք օրինակներ են բերում՝ ներկայացնելով, թե տարիքով ուսուցիչը ինչ բազմազան գործիքներ է կիրառել և ավելի պատասխանատվությամբ վերաբերել գործընթացին:

***Էն դասատուները, ովքեր օֆլայնի ժամանակ հետաքրքիր էին անցկացնում ու լրացուցիչ գիտելիք էին տալիս, նույնը պահպանվեց նաև օնլայնում, ձանձրալի դասերը միշտ ձանձրալի են, հագեցած դասերն էլ միշտ հագեցած են թե՛ օնլայնում, թե՛ օֆլայնում: Ուսուցչից է կախված՝ նայած ինչի համար է դասավանդում, եթե ուզի միջոցներ կգնի:***

***Ֆոկուս խմբային քննարկման մասնակից, 11-րդ դասարանի աշակերտ***

Աշակերտների համար օնլայն ուսուցման գործիքներին ծանոթանալու կամ կիրառելու համար հատուկ դասեր, վերապատրաստումներ չեն կազմակերպվել, հիմնականում ինքնուս կարողացել են օգտագործել, հարցերի, խնդիրների դեպքում էլ դիմել են դասընկերներին կամ տեղյակ ուսուցիչներին: Լոռու մարզում անցկացված ֆոկուս խմբերին մասնակցած որոշ աշակերտներ քաղհասարակության տարբեր կառույցների կողմից երիտասարդական ծրագրերի են մասնակցել և այնտեղ օգտագործած գործիքները փորձել են կիրառել նաև դպրոցական ուսուցման մեջ: Որոշներն էլ հարթակները սկսել են օգտագործել նաև դասերից դուրս՝

հասակակիցների հետ ըստ հետաքրքրությունների խմբեր ձևավորելու և քննարկումներ անցկացնելու համար։

Հեռավարից կրկին առկային անցնելով՝ որոշ գործիքներ ու հարթակներ շարունակում են կիրառել, օրինակ սոցիալական ցանցերում ձևավորված խմբերը՝ արագ հաղորդագրություն փոխանցելու համար։ Որոշ ուսուցիչներ էլ հեռավարի առանձին էլեմենտներ են բերել դասարան, օրինակ վիկտորինաները (quiz), google forms-ով հարցումներ անելը, տեսահոլովակ դիտելը կամ պատրաստելը։ Բայց, մեծամասամբ, դասերն անցկացվում են այնպես, ինչպես անց են կացվել մինչ համավարակի ժամանակահատվածում.

***«Ուրախացած անցել ենք հին մեթոդներին»:***

***Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ուսուցիչ***

Ուսուցիչները դա փորձում են պայմանավորել այն հանգամանքով, որ ոչ բոլոր դասարաններում կա բավարար տեխնիկա և ինտերնետի հասանելիություն հեռավար կրթության գործիքակազմերը կիրառելու համար։ Սակայն գրեթե բոլոր դպրոցներում էլ կա դասասենյակ, որտեղ առկա է համապատասխան տեխնիկա՝ էլեկտրոնային հարթակում դասերը դպրոցում անցկացնելու համար, տեսանյութեր պատրաստելու, խաղերի տեսքով գիտելիքի ստուգման համար։ Այս դասասենյակները ուսուցիչները հաճախ չեն օգտագործում, քանի որ պետք է նախապես մի քանի կազմակերպչական հարցեր կարգավորել, օրինակ նախապես ամրագրել, որ իրենք են օգտագործելու։

Այժմ դպրոցում կիրառում են նաև դասավանդման հիբրիդային ձևը, երբ լինում են քովիդի դեպքեր, տվյալ դասարանը կամ ողջ դպրոցը երկու շաբաթով անցնում է հեռավար ուսուցման, և ուսուցիչները ստիպված դարձյալ կիրառում են առցանց հարթակներն ու գործիքները։

Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած ուսուցիչների և աշակերտների մեծամասնությունը նախապատվությունը տալիս է առկա ուսուցմանը՝ չբացառելով հեռավար ուսուցման ժամանակ սովորած գործիքակազմի կիրառումը դրա մեջ։ Որպես հիմնավորում իրենց ընտրության՝ նշում են.

- Ուսուցման գործընթացը պլանավորված և ավելի կազմակերպված է, կարգուկանոն է տիրում։

- Դպրոցն ապահովում է ոչ միայն ուսուցում, այլ նաև դաստիարակություն, շփման մշակույթ, դպրոցում և հասարակության մեջ պահելու վարվելաձևի կանոններ, ինչը հնարավոր չէ փոխանցել հեռավար ուսուցման ժամանակ:
- Առկա ուսուցման ընթացքում ավելի ամուր է ուսուցիչ-աշակերտ կապը, ուսուցչի կողմից հետևողականությունը և գիտելիքի ամրապնդումը: *«Հեռավարում 1-2 երեխու բացահայտեցինք, բայց կորցրեցինք շատ - շատ երեխաների»,*- ֆոկուս խմբի մասնակից ուսուցիչ:
- Կենդանի շփմանը ոչինչ չի փոխարինի. աչքի կոնտակտը, մոտիվացնելը, էմոցիաներ տալն ու ստանալը, փոխգործակցելն ու համատեղ աշխատանքը ընդգծված են առկա ուսուցման մեջ: Դասարանային ուսուցման ժամանակ աշակերտները շփվում են, փորձ են փոխանակում, նաև միմյանցից են սովորում, իսկ հեռավարի ժամանակ կտրված են միմյանցից և միայն էկրանին են նայում:
- Առկա ուսուցումը հարթ ու սահուն է անցնում, ժամանակը կարելի է արդյունավետ օգտագործել, այն չի ընդհատվում տեխնիկական խնդիրներով, ավելորդ ժամանակ չես վատնում ոչ էական բաների վրա:
- Աշակերտներն առկա դասերին ավելի ուշադիր են և լավ են սովորում, ստիպված են լինում մասնակցել, իսկ հեռավարի ժամանակ, կարող են ձայնն անջատել և զբաղվել այլ գործերով:
- Առկա ուսուցման մեջ տարիներով փորձառություն է կուտակվել, այն փորձված է, իսկ հեռավարը շատ անկատար կողմեր ունի, ինչը ուղղակիորեն ազդում է ուսուցման արդյունավետության վրա:

Հատկանշական է, որ մասնակիցներից և ոչ մեկը միանշանակ կերպով չի ընտրել հեռավար ուսուցումը, սակայն եղել են մասնակիցներ, որոնք առաջարկել են համադրել ուսուցման այս երկու ձևերը: Մասնավորապես հնչել են հետևյալ առաջարկները.

- Աշակերտը հնարավորություն ունենա ընտրելու՝ երբ հաճախել դպրոց, երբ միանալ հեռավար դասին, կամ ընտրությունը պայմանավորել առարկայով: *«Միրածս դասերը լինեն օֆլայն, չսիրածս՝ օնլայն, որ չմասնակցեմ, զուգահեռ կարողանամ ինքնակրթությամբ զբաղվել, ուսումնասիրեմ էն բաները, որ ինձ հետաքրքիր են»*,- ֆոկուս խմբային քննարկման մասնակից, 12-րդ դասարանի աշակերտ:
- 4 օր առկա, մեկ օր հեռավար դասեր անցկացնելու տարբերակ ունենալ, քանի որ դասի որոշ էլեմենտներ արդյունավետ են առկա ուսուցման դեպքում, որոշներն էլ՝ հեռավար, որոնք կապված են վիզուալ գործիքների կիրառման հետ: Բայց

համադրումը պետք է իրականացվի բացառապես ուսուցչի առաջնորդությամբ և վերահսկողությամբ:

- Դասերը անցկացնել առկա, իսկ, օրինակ, գրավոր աշխատանքները հանձնարարել էլեկտրոնային տարբերակով՝ օգտվելով պատրաստի ծրագրերից և ռեսուրսներից, ինչը հնարավորություն կտա թեթևացնելու նաև ուսուցչի ծանրաբեռնվածությունը, բացի այդ հարթակները թույլ են տալիս ավելի արդյունավետ գիտելիքների ստուգում անել, աշակերտներն էլ ավելի հաճույքով և հետաքրքրված են աշխատում:
- Հիմնական դպրոցի ուսուցումը կազմակերպել առկա եղանակով, իսկ ավագ դպրոցինը՝ հեռավար, քանի որ այդ տարիքում սովորողներն ավելի գիտակից են և ձգտում ունենալու դեպքում կսովորեն:

Հարկ է նշել մի դիտարկում ևս, որ և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները հակված են հեռավար անցկացնել այն առարկաների դասերը, որոնց շրջանակում կարողացել են հարթակն ըստ պատշաճի օգտագործել, օրինակ, ուսուցիչը տիրապետել է գործիքակազմին և կարողացել է հագեցած դաս կազմակերպել, իսկ երբ հեռավար դասը վերածվել է ուղղակի առկա դասը տեսախցիկի առջև անցկացնելուն, պատկերը լրիվ այլ է եղել: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հեռավար կրթությունը առկա կրթության հետ կարող է համադրվել և արդյունավետ լինել այն ժամանակ, երբ յուրաքանչյուր ուսուցիչ իր առարկայի շրջանակում կարողանա կիրառել անհրաժեշտ գործիքակազմ և անցկացնել իրական հեռավար արդյունավետ դաս:

## *Covid-19-ի պայմաններում արդյունավետ աշխատելու ուսուցիչների կարիքները*

Covid-19-ով պայմանավորված իրավիճակը նոր պահանջներ և ժամանակի հրամայական սահմանեց տարբեր ոլորտների մասնագետների համար: Հակահամաճարակային կանոնների պահպանում, անցումը հեռավար ուսուցման, աշխատանքի բնույթի և ծավալների փոփոխությունը նոր գիտելիքների և հմտությունների պահանջ ձևավորեցին նաև կրթության ոլորտի ներկայացուցիչների, և մասնավորապես ուսուցիչների համար:

Պետական ոլորտի աշխատողները, այդ թվում կրթական համակարգի, հատուկ վերապատրաստումների չեն մասնակցել նոր իրավիճակում գործելու, ինչ-որ անհրաժեշտ հմտություններ զարգացնելու, գործիքներ կիրառելու համար։

***Որևէ պաշտոնական վերապատրաստում կամ քննարկում չի եղել աշխատակիցների հետ: Կարիքը չեն տեսել, չեն պատկերացրել, որ դրա կարիքը կա: Յուրաքանչյուրն ինքնուս ձևով գտել է աշխատելու ձևերը:***

***Հարցազրույցի մասնակից, կրթության ոլորտի աշխատակից***

Որպես օրինակ, Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունում առաջիկայում նախատեսվում է ներդնել Microsoft Teams ծրագիրը, որն օգտագործվելու է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, գործառույթները էլեկտրոնային հարթակում իրականացնելու համար: Ծրագրի ներդրումից հետո նախատեսվում է ԿՏԱԿ-ի կողմից նաև աշխատակիցների վերապատրաստում՝ ծրագրին և անհրաժեշտ գործիքակազմին ծանոթացնելու համար: Ճիշտ է՝ սա արվում է համավարակից մեկ տարի անց, ինչը պայմանավորված է ղեկավար կազմի փոփոխությամբ և նոր ռազմավարության շրջանակներում համապատասխան քայլերի մշակմամբ:

Հաճախ էլ պետական ոլորտի մասնագետների մոտ չկա վերապատրաստումների մասնակցելու մոտիվացիա և անհրաժեշտության գիտակցում: «*Սակայն իրականում կարիք ունեն ոչ միայն տեխնիկական գիտելիքների, այլև հաղորդակցման, թիմային աշխատանքի, ապրումակցման, կոնֆլիկտների հարթման, որոշումների կայացման հմտությունների զարգացման: Դեռևս գիտակցումը չկա, սակայն արդեն նախատեսվում են նման վերապատրաստումներ*», - Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության ներկայացուցիչ:

Ըստ Ինթրա հոգեբանական ակումբի կողմից «Հեռավար ուսուցման խնդիրները Շիրակի մարզի գյուղական համայնքների դպրոցներում» վերլուծության՝ արտակարգ դրության ժամանակահատվածում կրթության ոլորտի մասնագետների, մասնավորապես ուսուցիչների համար որոշակի թվով ուսուցողական նյութեր տեղադրվել են, կազմակերպվել բաց դասեր, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով կազմակերպվել է թվով յոթ վերապատրաստում: ԿՏԱԿ-ը պատրաստել է Google Classroom, Microsoft Teams, «Ուսումնառության ընդհանուր ձևավորում» ուղեցույցները,

որոնք հասանելի են առցանց հարթակում՝ տեսադասերի ձևաչափով:[12] ԿՏԱԿ-ի կողմից նաև փորձ է արվել, որոշակի պարզագույն հմտություններ մասսայական տարածելու խնդիրը լուծել, երեք խումբ տեսադասեր են տեղադրվել youtube-ում: Facebook-ում ստեղծվել են երեք էլէկտրոնային համայնքներ՝ Google classroom-ի, Microsoft Teams-ի և UDL-ի (ունիվերսալ դիզայնի), որտեղ յուրաքանչյուրում հավաքված է մոտ 6000 մարդ: Այդ հարթակներում պարբերաբար տեղադրվել են տեսանյութերը, և շաբաթը մեկ անգամ վեբինարի միջոցով քննարկումներ են կազմակերպվել:

ԿՏԱԿ-ը ուսուցիչների համար կազմակերպել է նաև Moodle ծրագրի վերապատրաստումներ: Ընդ որում, համավարակի ընթացքում վերապատրաստմանը մասնակցել ցանկացողների մեծ թվով պայմանավորված, նախատեսված 4-ի փոխարեն իրականացրել են 8 վերապատրաստում, նախատեսված 200 մասնակցի փոխարեն վերապատրաստել են 2880 ուսուցչի, որոնցից 1665-ը ստացել են հավաստագրեր: Հետաքրքրական է, որ 3 քաղաքներում՝ Երևանում, Վանաձորում և Ստեփանավանում, անցկացված ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած և ոչ մի ուսուցիչ չի նշել, որ օգտագործել է Moodle ծրագիրը, չնայած երևանյան մեկ դպրոցում որոշ ուսուցիչներ նշել են, որ մասնակցել են վերապատրաստմանը: Քիչ թվով ուսուցիչներ էլ մասնակցել են Teams հարթակի վերապատրաստմանը:

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը իր ծրագրում ներգրավված ուսուցիչ առաջնորդների համար կազմակերպել է ամառային դպրոց, և ըստ հիմնադրամի ներկայացուցչի՝ բոլոր դասընթացներն ու թեմաները հաջողվել է արդյունավետ իրականացնել օնլայն հարթակում: Կարգմակերպությունը ունի նաև ներքին օգտագործման հարթակ, որտեղ դրվում են իրենց ծրագրում ներգրավված ուսուցիչների տեսադասերը, ուսումնական այլ նյութեր և կիսվում միմյանց հետ:

Տարբեր վերապատրաստումների ընթացքում ստացած գիտելիքները հիմնականում ուսուցիչները փոխանցել են նաև իրենց գործընկերներին: Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած Լոռու մարզի ուսուցիչները որևէ պետական կառույցի կողմից վերապատրաստման չեն մասնակցել, նրանից շատ քչերը սեփական նախաձեռնությամբ մասնակցել են այլ կառույցների անցկացրած վերապատրաստումներին (Դասավանդիր Հայաստան, Education camp): Եղել են նաև ուսուցիչներ, որոնք ինքնակրթվել են, փնտրել և գտել են դասընթացներ, մասնակցել են՝ փորձելով կատարելագործել իրենց հմտությունները: Բայց ոչ բոլոր ուսուցիչներն են,

[12] «Հեռավար ուսուցման խնդիրները Շիրակի մասրզի գյուղական համայնքների դպրոցներում» վերլուծություն, Ինթրա հոգեբանական ակումբ, 2020, էջ 36

որ աշխատել են իրենց վրա, շատերը ուղղակի անցկացրել են դասը ինչպես դպրոցում, ուղղակի տեսախցիկի առաջ նստած:

*«Վերապատրաստումից հետո ուսուցիչները ինքնավստահություն են ձեռք բերում, ինքնակազմակերպվում են և ոգևորվում իրենց ձեռք բերած նոր գիտելիքներով, ցավոք, հիմնականում մասնակցում եմ միայն նրանք, ովքեր պրպտող են, շատ է նրանց թիվը, որոնք չեն էլ պատկերացնում ինչ հնարավորություններ կարող է տալ իրենց ՏՀՏ գործիքները, որոնք կկարողական կիրառել ոչ միայն հեռավար ուսուցման ժամանակ, այլև առկա դասերի ժամանակ, դասապրոցեսն ավելի հետաքրքիր և մատչելի դարձնելու համար»:*

*Հարցազրույցի մասնակից, ԿՏԱԿ, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի վերապատրաստող մասնագետ*

Ըստ ԿՏԱԿ-ի ներկայացուցիչների՝ դպրոցների տնօրենները առնվազն պաշտոնական խողովակներով՝ շրջաբերականների միջոցով, տեղեկատվություն են ստանում տեղի ունեցող բոլոր փոփոխությունների և նորությունների, ստեղծված բոլոր հարթակների և դրանց մեկնաբանող տեսանյութերի մասին: Ուսուցիչները նշում են, որ հրավերներ ստացել են, բայց սովորաբար դպրոցից սահմանափակ թվով մասնագետներ կարող էին մասնակցել դրանց:

Covid-19-ը ստեղծեց մի իրավիճակ, երբ ուսուցիչները ուղղակի ստիպված էին ձեռնարկել քայլեր սեփական կարողություններն ու հմտությունները զարգացնելու համար, դրան զուգահեռ ԿԳՄՍ նախարարությունը՝ իր տարբեր ստորաբաժանումներով, և մի շարք այլ կրթական ու քաղհասարակության կառույցներ ձեռնարկեցին վերապատրաստումներ, կարողությունների զարգացման գործընթաց նրանց համար: Այդուհանդերձ ուսուցիչների կարողությունների բացը և զարգացման կարիքը մնում է օրախնդիր, որի մասին բարձրաձայնում են թե՛ վերադաս կառույցների, թե՛ քաղհասարակության ներկայացուցիչները, թե՛ աշակերտներն ու ծնողները, և թե՛ հենց իրենք՝ ուսուցիչները:

*«Շատ ուսուցիչներ համակարգչից հեռու են, թղթային մեթոդը ուղղակիորեն ցանկանում են կիրառել նույնությամբ համակարգչով, դժվար են պատկերացնում ՏՀՏ լայն հնարավորությունները»:*

*Հարցազրույցի մասնակից, ԿՏԱԿ-ի ներկայացուցիչ*

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի ծրագրի ուսուցիչների համար, օրինակ, պարտադիր պահանջ է նորագույն տեխնոլոգիաների տիրապետումը, հատկապես Covid-19-ի բռնկումից հետո կազմակերպության թիմը սկսեց ավելի ակտիվ կերպով օգտագործել և պահանջել ուսուցիչ-առաջնորդներից: Առաջնորդության զարգացման ղեկավարները ամենշաբաթյա հանդիպումներ են ունենում ուսուցիչների հետ՝ ապահովելով շարունակական մասնագիտական զարգացում, նոր իրավիճակում այդ հանդիպումները տեղափոխվել են օնլայն հարթակ, փոխվել են գործիքները, բովանդակությունը ադապտացվել իրավիճակին: Ուսուցումը հիմնականում հիմնվում է նախագծահեն և փոփոխությունների վրա հիմնված կրթության վրա, ինչը նոր փոփոխվող իրավիճակում այնպիսի գործիքակազմերի տրամադրում է ենթադրում, որ հնարավորինս մատչելի և կիրառելի լինի բոլորի համար:

Ֆոկուս խմբային քննարկման մասնակից աշակերտները, որպես ուսուցչի գործունեության հիմնական շահառուներ և ազդեցության կրողներ, առանձնացնում են մի շարք կարողություններ ու հմտություններ, որոնց պետք է տիրապետի նոր իրավիճակում աշխատող ուսուցիչը.

- <u>Տեխնիկական հմտություններ:</u> Աշակերտները նշում են, որ հաճախ ուսուցիչները չեն տիրապետում էլեկտրոնային սարքերի օգտագործման նվազագույն գիտելիքների, ինչը հեռավար դասերի ընթացքում հանգեցնում էր խնդիրների, հաճախ էլ զավեշտալի դեպքերի՝ անհարմար ուսուցչի համար: Այնինչ, ուսուցիչները պետք է տիրապետեն ավելիին, օրինակ Zoom հարթակում արդյունավետ օգտագործեն ավելի առաջավոր գործիքներ՝ գրատախտակը, խմբերի բաժանման մեթոդը և այլն, մշտապես սլայդներ և հոլովակներ օգտագործեն իրենց դասերին: *«Առկա դասերը ոչ թե նույնությամբ պետք է տեղափոխեն առցանց հարթակներ, այլ փոխեն գործիքները, մեթոդները, ժամանակը, գործունեության ձևերը»:*
- <u>Մեթոդների իմացություն, դասը հետաքրքիր անցկացնելու կարողություն:</u> Շատ աշակերտներ նշում են, որ ձանձրանում եմ դասերի ընթացքում և սկսում զբաղվել կողմնակի բաներով: Նրանք գտնում են, որ ուսուցիչը պետք է կարողանա հետաքրքրություն առաջացնել իրենց մեջ, այնպես անի, որ ցանկանան սովորել, ինքնուրույն լրացուցիչ նյութ ուսումնասիրեն: Առանձնացնում են մի քանի մեթոդներ, որ կուզենային կիրառվեր իրենց դասապրոցեսում՝ խմբային աշխատանքներ, հետազոտություններ, խաղեր, վիկտորինաներ: *«Աշակերտը պետք է իմանա, որ դասի ընթացքում մի քանի անգամ հետաքրքիր վարժություն կամ գործողություն են անելու, և սպասի դրան»:*

● Մասնագիտական գիտելիքներ: Աշակերտները կարծում են, որ ուսուցիչների մեծ մասը ոչ միայն կարիք ունի վերապատրաստվելու ՏՀՏ գործիքակազմերի տիրապետման թեմաներով, այլև սեփական առարկայի մասնագիտական գիտելիքների հետ կապված: *«Ուսուցիչը պետք է խորությամբ հասկանա իր առարկայի նպատակներն ու խնդիրները, առաջնահերթություններ սահմանի և իր ոգևորությամբ աշակերտներին էլ ոգևորի սովորել առարկան»:*

● Փափուկ հմտություններ (soft skills): Հետաքրքրական է, որ աշակերտներն ուսուցիչների համար առանձնացնում են նաև, այսպես կոչված, փափուկ հմտություններ՝ առանց այդ տերմինն օգտագործելու: Հատկապես առանձնացնում են արդյունավետ հաղորդակցվելը, իրավիճակի և ժամանակի կառավարումը, մենթոր լինելու կարողությունը, դրական տրամադրվածությունն ու հումորի զգացումը:

● Ուսուցչի կերպար, խոսք, ձայն: Աշակերտները գտնում են, որ ուսուցիչը պետք է օրինակելի կերպար լինի իրենց համար, հեղինակություն, որպեսզի ձգտում լինի նրան լսելու: Հատկապես պետք է ուշադրություն դարձնի իր խոսքին և ձայնին՝ աշխատելով կատարելագործել դրանք:

● Մոտիվացնող, ոչ թե սահմանափակող: Ուսուցիչն է թևեր տվողը կամ դրանցից զրկողը: Աշակերտները հաճախ քովիդով պայմանավորված իրավիճակում անհրաժեշտ գործիքակազմը դնում են երկրոդ պլան: Առաջնահերթ նրանց համար կարևոր է ուսուցչի սրտացավությունը, աշակերտին հասկանալու և իրավիճակին համապատասխան լուծումներ տալու կարողությունը, հավասարը հավասարին դիտարկելն ու չճնշելը:

***Ուսուցիչը բրիտվայով (ածելիով) կտրում ա էրեխեքի ազատ մտածողությունը, կարծիք ունենալը, անհատականությունը, ասումա ձևը սենց ա, ու դու պետք ա էս ձևով մտածես:***

***Ֆոկուս խմբային քննարկման մասնակից, 12-րդ դասարանի աշակերտ***

Չնայած աշակերտների մեծամասնությունը ընդգծում է, որ իրենց դպրոցում սահմանափակում են, բայց նրանք նաև միտք են հայտնում, թե ուսուցիչներն էլ են սահմանափակված վերադասի կողմից՝ ծավալուն թղթաբանությամբ, թեմատիկ պլաններով և այլ պարտադիր անելիքներով, և հաճախ ժամանակ ու բավարար ազատություն չեն ունենում ստեղծագործական մոտեցումներ դրսևորելու համար:

Ուսուցիչները հիմնականում դեմ չեն նոր մեթոդներ և գործիքներ սովորել, բայց նշում են, որ դրանք անպայման պետք է նպատակային լինեն և աշխատանքում կիրառելի, այլապես կդժվարանան ժամանակ տրամադրել և մասնակցել, քանի որ,

առանց այդ էլ խիստ ծանրաբեռնված են։ Նրանք առանձնացնում են գնահատման գործիքների անհրաժեշտությունը, որոնք կբացառեին արտագրությունը կամ կունենային այլընտրանքային տարբերակներ՝ անհատական մոտեցում ցուցաբերելու համար։

Տարբեր հարթակներով աշխատելիս, բախվելով տարբեր խնդիրների, որոնք թվել ենք վերը, ուսուցիչները նշում են, որ անհրաժեշտ է այնպիսի հարթակ ներդնել և կիրառել, որի ծրագիրը համատեղելի կլինի էլեկտրոնային տարբեր սարքերի հետ, քիչ հիշողություն կզբաղեցնի, մատչելի կլինի բոլորի համար, բայց և կունենա դասապրոցեսը կազմակերպելու բոլոր անհրաժեշտ գործիքները։ Այսպիսի գործիքներ ներդնելիս շատ կարևոր են վերապատրաստումները, հատկապես ավագ սերնդի ուսուցիչները նշում են, որ իրենք կարիք ունեն սովորելու այբենարանի նման՝ ամենասկզբից։ Կարիք կա ծնողներին ևս իրազեկել առցանց գործիքների և դրանց կարևորության մասին, որպեսզի վերջիններս հարկ եղած դեպքում աջակցեն իրենց երեխաներին, կամ գոնե տարրական պատկերացում ունենան՝ իրենց երեխան ինչով է զբաղված։

Բացի առցանց գործիքներն ու հարթակները, որոշ ուսուցիչներ կարևորում են նաև դասավանդման մեթոդների հետ կապված վերապատրաստումները։ Վերապատրաստումները կարևորում են, քանի որ այն ոչ միայն ուսուցում է տվյալ թեմայի մասին, այլև ուսուցիչների համար փորձի փոխանակման հարթակ է։ Տեսանյութեր պատրաստելու կամ առկա տեսանյութերը դասի համար վերափոխելու, այլ լեզվով տեսանյութերը հայերեն դարձնելու հմտություններ սովորելու կարիք ևս ունեն։ Անհրաժեշտ են համարում դասասենյակների հագեցվածությունը համապատասխան տեխնիկական միջոցներով, ինչը հնարավորություն կտա ինտերակտիվ դասեր իրականացնել։

Covid-19-ի ստեղծած իրավիճակը հաղթահարելու և նոր իրավիճակում ուսուցիչների գիտելիքների և հմտությունների բացը լրացնելու համար, թերևս անհրաժեշտ է համալիր մոտեցում։ ԿԳՄՍ նախարարությունը պետք է այս իրավիճակում գործելու հստակ կանոնակարգեր, ընթացակարգեր և մեթոդոլոգիա ունենա։ Հարկավոր է մեկ միասնական հարթակ ստեղծել, որտեղ ուսուցիչները, աշակերտները և ինչու չէ նաև ծնողները կկարողանան ծանոթանալ էլեկտրոնային հարթակների գործիքներին, և ստիպված չեն լինի ամեն անգամ ժամեր ծախսել նոր գործիքներ կիրառելու համար։ Դրանց հետ կապված հարկ է մշակել մատչելի ուղեցույցներ, տեսանյութեր և ակտիվորեն իրազեկել բոլոր շահագրգիռ կողմերին։

Անհրաժեշտ է մեծացնել վերապատրաստումների ծավալներն ու արդյունավետությունը, որպեսզի դրանք հստակ և թիրախավորված լուծեն ուսուցչի խնդիրը: Արժե ներդնել մենթորինգի գաղափարը, որը հնարավորություն կտա փորձառու մասնագետներին աջակցել իրենց գործընկերներին (*ըստ ԿՏԱԿ-ի ներկայացուցչի մրցույթ է հայտարարվել, որի արդյունքում ընտրվելու է 20 դպրոց, որոնցից յուրաքանչյուրում մեկ մենթոր կվերապատրաստվի: Այսինքն կունենան 20 նոր մենթորներ, որոնք իրենց դպրոցներում ուսուցիչներին կսովորեցնեն էլեկտրոնային դասավանդման հմտությունները)*:

Շատ կարևոր է պատրաստ լինել հետագա համավարակներին և տարբեր ճգնաժամային իրավիճակներին, չսպասել ինչ-որ իրավիճակ սկսվելուց հետո քննարկել հնարավոր ելքեր, այլ նախապես ունենալ հստակ գործիքակազմ, հստակ հարթակ, միշտ պատրաստ լինել:

***Մի նորմալ բան չունենք. անցավ մեկ տարի, բայց նույնիսկ հիմա մի կարգին միասնական հարթակ չունենք:***

***Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ուսուցիչ***

Քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչները, որոնք առնչություն են ունեցել կրթության ոլորտի և դրա մանագետների հետ, նույնպես առանձնացնում են մի շարք խնդիրներ: Նրանք կարծում են, որ խնդիրները հիմնականում համակարգային են և ճիշտ չէ դրանք դիտարկել առանձնացված՝ որպես Covid-19-ով պայմանավորված իրավիճակի խնդիրներ, այն իմաստով, որ եթե կրթության համակարգը արդյունավետ գործեր, համավարակի առաջացրած իրավիճակն էլ ավելի հեշտ կհաղթահարվեր: Կարծիքներ են հնչել, որ կրթության համակարգի աշխատակիցները արդյունավետ չեն աշխատում և հաճախ ժամավաճառությամբ են զբաղվում՝ չնայած որ ոլորտում բազմաթիվ խնդիրներ կան: Առհասարակ պետական ոլորտում շատ լուրջ մասնագետների խնդիր կա, քանի որ վերջիններս բաց չեն նոր գործիքների և հմտությունների տիրապետելու համար: Ավելի շատ կարիք կա աշխատանք տանելու մտածողության փոփոխության հետ, քանի որ, եթե ցանկություն լինի, գործիքները հնարավոր է սովորել: «Կոմֆորտ զոնայից» դուրս գալու և նորն ու առաջավորը ընդունելու խնդիր կա: Շատ գործառույթներ իրականացվում են ձևական, տարերայնորեն և ինքնահոս ձևով՝ առանց լուրջ կարիքի գնահատումների, հեռանկարային պլանավորման և համակարգային լուծումների:

Քաղհասարակության ոլորտի ներկայացուցիչները ընդգծում են, որ դպրոցի խնդիրներն ու դրանց լուծումները դիտարկելուց առաջ նախ պետք է դիտարկել կրթության ոլորտի վրա ազդող բազմաթիվ գործոնները, որոնցից մեկն էլ ազգային գաղափարախոսության բացակայությունն է, և հետևաբար նաև՝ կրթության տեղի և դերի ընկալումը դրա մեջ։ Կրթությունը պետք է արժեք լինի, որի կարևորությունը կզգան և կգնահատեն բոլորը։ Այս իմաստով անելիքներ կան բոլոր մակարդակներում՝ սկսած քաղաքականության մշակման մակարդակից և վերջացրած ուսուցչի կարողությունների զարգացմամբ։

Անհրաժեշտ է մանկավարժական բուհերի հզորացում, որ 21-րդ դարին համապատասխան ուսուցիչ պատրաստեն։ Արդեն իսկ այսօր բազմաթիվ (հատկապես հեռավոր գյուղական) դպրոցներում ուսուցիչների քանակի խնդիր կա, չհաշված մասնագիտական կոմպետենցիաների բացը։ Այս առումով առավելապես կարևոր է քաղաքականություն մշակողների դերը և սրտացավ ու հետևողական բարեփոխումների իրականացումը ոլորտում։ Ըստ քաղհասարակության ոլորտի փորձագետների՝ կարելի է դաշտը ազատականացնել, հնարավորություն տալ նվիրում և հմտություններ ունեցող, դասավանդման պատրաստ մարդկանց և չսահմանափակել միայն մանկավարժական կրթությամբ։ Առաջարկվում է անընդհատ նոր մոդելներ փնտրել և ներդնել՝ ժամանակի հրամայականին համապատասխան կրթություն ունենալու համար, օրինակ՝ թույլատրել տարբեր ոլորտներում հաջողություններ գրանցած մասնագետների ներգրավումը դպրոց, ինչպես նաև դասապրոցեսի կազմակերպումը դպրոցից դուրս՝ որևէ գիտակրթական կամ տեխնոլոգիական կենտրոնում։

ՔՀԿ ներկայացուցիչների կարծիքով ոչ միայն համավարակի պայմաններում գործելու համար անհրաժեշտ հմտությունների բացը պետք է փորձել լրացնել, այլ մտածել ուսուցիչների ցկյանս ուսումնառության և մշտական վերապատրաստումների մասին։ ԿԳՄՍ նախարարությունը պետք է ունենա վերապատրաստման նոր եղանակ, վերապատրաստողների թիմը պետք է համընթաց քայլի կյանքի, իրավիճակի, տեխնոլոգիաների փոփոխության հետ, լրիվ նոր մակարդակի վերապատրաստման ծրագրի կարիք կա, որը միաժամանակ կլինի և՛ մոտիվացնող, և՛ պահանջող, և՛ ուսուցչի մտածողությունը փոխող։ Վերապատրաստման կազմակերպումը կարելի է պատվիրակել նաև ոլորտում իրական գիտելիք, փորձառություն և գործիքակազմ կուտակած այլ մասնագիտական կառույցի, որը, օգտագործելով առաջավոր մեթոդներ, գործընթացը կդարձնի հետաքրքիր ու արդյունքահեն։ Վերապատրաստումը ոչ թե մեկանգամյա պիտի լինի, այլ շարունակական և հետևողական, հետադարձ կապ պետք

է պահել ուսուցչի հետ, աջակցել, որ սովորածը կիրառության մեջ դրվի։ Վերապատրաստված ուսուցիչը չի կարող նույն ձևով վարձատրվել, ինչպես մյուսները, իր դասարանը որակապես տարբերվելու է մյուս դասարաններից, ինչը չգնահատելու դեպքում մոտիվացիան կվերանա։ Մասնագետը պետք է ձգտի վերապատրաստվել, անընդհատ և շարունակաբար զարգանալ։ Ուսուցիչը պետք է գտնի՝ ինչու եմ սովորում հարցի պատասխանը, պետք է հստակ պատկերացնի, թե նոր գիտելիքը կամ հմտությունը իր առջև ծառացած որ խնդիրը կարող է լուծել։ Երբ ուսուցիչը հասկանա, որ այդ գործիքները լուծում են իր խնդիրները և գործը հեշտացնում, առավել պատրաստակամ և մոտիվացված կընդունի դրանք։

***«Սերունդ» դպրոցում, որը «Դասավանդիր Հայաստան»-ի այս տարվա նախաձեռնությունն է Դիլիջանի դպրոցներից մեկում, տեսնում ենք, որ 30 տարվա մանկավարժները կարող են լրիվ նոր մոտեցում կիրառել, ստանալ լրիվ նոր արդյունքներ, որովհետև զգում է, որ իր հետ աշխատող մարդիկ աջակցող են, ոչ թե սխալ բռնող. . . , ծնողը ևս հասկանում է, որ ուսուցչի գործընկերն է, արդյունքում ուսուցիչը ոգևորվում է, այլ տրամադրվածությամբ է մտնում դասարան, երեխաներն էլ են փայլում, ինք էլ։***

***Հարցազրույցի մասնակից, «Դասավանդիր Հայաստան» կրթական հիմնադրամի ներկայացուցիչ***

ՔՀԿ ներկայացուցիչների կարծիքով ևս՝ կրթական համակարգը բացարձակապես պատրաստ չէր Covid-19-ին։ Տարիներ շարունակ տարբեր հետազոտությունների տվյալներ եկել են արձանագրելու, որ Հայաստանում բարձր է համակարգիչ, հեռախոս և ինտերնետ ունեցող մարդկանց տոկոսը, և նրանք օգտվում են տեխնոլոգիաներից։ Սակայն պետք է արձանագրել, որ դեռևս կան շատ ուսուցիչներ և աշակերտներ, որոնք չունեն համապատասխան սարքեր և ինտերնետային կապ, ինչպես նաև որոշ սոցիալական ցանցերում գրանցված լինելն ու որոշակի ակտիվություն ցուցաբերելը դեռևս ՏՀՏ գործիքակազմին տիրապետել չէ։ Շատերը կանգնեցին փաստի առաջ, քանի որ պարզ դարձավ, որ էլեկտրոնային կրթական ծրագրերն ու հարթակները համատեղելի չեն իրենց հեռախոսների հետ, ինչպես նաև իրենք չունեն համապատասխան կարողություն դրանք օգտագործելու։ Սրան զուգահեռ կրթական ծրագրերը, չափորոշիչները, դասագրքերը համատեղելի չեն հեռավար ուսուցմանը։ Եվ ստացվեց մի իրավիճակ երբ *«…արեցին ինչ կարող էին և ինչպես կարող էին»*,- հարցազրույցի մասնակից, ՔՀԿ ներկայացուցիչ։

Ճիշտ է՝ համավարակը պատճառ դարձավ, որ նույնիսկ ամենաանտեղյակ ուսուցիչները կիրառեն որոշակի գործիքներ, բայց այդ կիրառության մակարդակը շատ հեռու է հաջողված լինելուց: Ստեղծված իրավիճակում կարևոր է կրթության բոլոր մասնակիցներին տեխնիկական սարքերով ապահովելը, ինչպես նաև, տեխնոլոգիաների ուսուցումից բացի, ուսուցիչների հմտությունները պետք է զարգացնել մի քանի այլ ուղղություններով ևս.

- Փափուկ հմտություններ (soft skills)՝ պլանավորման, կազմակերպման, հաղորդակցման, ժամանակի կառավարման, բանակցությունների և այլ
- Համացանցի հիգիենայի, մեդիագրագիտության, քննադատական մտածողության,
- Ընդհանուր զարգացում, և իրազեկության բարձրացում տարբեր թեմաների հետ կապված, որպեսզի գոնե համաչափ քայլեն իրենց աշակերտների հետ:

## *Եզրակացություններ: Հանրակրթության առանձնահատկությունները և կարիքները համավարակի պայմաններում*

- Համավարակի պայմաններում հեռավար աշխատանքի անցումը ցնցումային և տրավմատիկ է եղել կրթության ոլորտի մասնակիցների համար, ինչը պայմանավորված է և՛ հոգեբանական, և՛ տեխնիկական գործոններով, մասնավորապես, աշխատանքի կազմակերպման տեսանկյունից տեխնիկապես անպատրաստ լինելով՝ սկզբնական շրջանում համապատասխան ցուցումների և մեթոդիկայի բացակայությամբ: Հետազոտության արդյունքում կարելի է արձանագրել, որ կրթական համակարգը պատրաստ չէր Covid-19-ի համաճարակի հետևանքով ստեղված իրավիճակին:
- Համավարակի հետևանքով հեռավար կրթության անցման մարտահրավերն ավելի հեշտ կհաղթահարվեր, եթե կրթության համակարգը արդյունավետ գործեր: Բարեփոխումները պետք է սկսել քաղաքականության մշակումից, իսկ որպեսզի դրանք առավել կարիքահեն և հասցեական լինեն, անհրաժեշտ է իրականացնել շարունակական կարողությունների զարգացում կրթական ոլորտի բոլոր մակարդակների մասնագետների համար, ներդնել մեխանիզմներ, որպեսզի նրանք արդյունավետ երկխոսության և առաջացող խնդիրներին արագ արձագանքման հնարավորություն ունենան՝ օգտագործելով նորարար ու ստեղծարար մոտեցումներ: Իսկ ապագա մասնագետների կարողությունների

բացը լրացնելու համար պետք է թիրախավորել մանկավարժական բուհերի հզորացումը, որպեսզի հնարավոր լինի 21-րդ դարին համապատասխան ուսուցիչ պատրաստել և սերունդ կրթել:

- Համակարգիչների, պլանշետների, սմարթ-հեռախոսների և ինտերնետի սահմանափակ հասանելիությունը նոր թվային անջրպետ է ստեղծել կրթության տրամադրման և ստացման համար, ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար: Բացի այդ, չնայած համակարգիչ, հեռախոս և ինտերնետ ունեցող մարդկանց թիվը մեծ է հասարակության մեջ, սակայն առցանց որոշակի ակտիվություն ցուցաբերելը դեռևս ՏՀՏ գործիքակազմի կիրառություն չէ և չի երաշխավորում հեռավար հարթակների արդյունավետ կիրառություն:
- Ուսուցիչների համար ստեղծված իրավիճակը մարտահրավերային էր՝ կապված նոր պայմաններում առցանց գործիքներով աշխատելու փորձ չունենալու հետ, ինչպես նաև մեդիագրագիտության և հեռավար դաս անցկացնելու համապատասխան կարողությունների բացակայությամբ: Չնայած ստեղծված դժվար իրավիճակին և անորոշությանը՝ հեռավար ուսուցումը շատ ուսուցիչների հնարավորություն ընձեռեց զարգացնել սեփական հմտությունները, ուսուցիչները սկսեցին սովորել և փնտրել նոր գիտելիքներ ու գործիքներ, աճեց փոխօգնությունը: Հարկ է նշել, որ կան նաև շատ ակտիվ և ՏՀՏ ոլորտում հմուտ ուսուցիչներ, որոնք արագ հարմարվել են իրավիճակին և շարունակել իրենց աշխատանքը:
- Համավարակի հետևանքով հեռավար կրթության կազմակերպման ընթացքում, մասնավորապես մինչ նոր ուսումնական տարվա մեկնարկը (2020թ. սեպտեմբեր), հեռավար կրթությունը կազմակերպվեց տարերայնորեն, առանց կոնկրետ համակարգերի ներդրման: Ուսուցիչների կողմից օգտագործվող հարթակները եղել են՝ viber-ը, whatsapp-ը և messenger-ը, իսկ ամենահաճախակի նշված հարթակը՝ Zoom-ը: Նոր ուսումնական տարում՝ 2020թ. սեպտեմբերից, երբ ներդրվեց Microsoft Teams համընդհանուր հարթակը, քիչ դպրոցներ ամբողջությամբ անցան այդ համակարգին, քանի որ ուսուցիչներն արդեն հմտացել էին այս կամ այն գործիքի կիրառման մեջ: Առաջարկված և օգտագործված հարթակների ու գործիքակազմի մեջ չի տրվում բացարձակ նախապատվություն ինչ-որ մեկին. հարթակը հավանել կամ չհավանելը հիմնականում պայմանավորվել է ոչ թե վերջինիս ընձեռած հնարավորություններով, այլ շատ դեպքերում՝ ուսուցչի ունեցած լավ կամ վատ փորձառությամբ, ինչպես նաև հարթակից օգտվելու հմտությունով:
- Տարբեր հարթակներով աշխատելիս, բախվելով տարբեր խնդիրների, ուսուցիչները նշում են, որ անհրաժեշտ է միասնական հարթակ ներդնել, որի

ծրագիրը համատեղելի կլինի էլեկտրոնային տարբեր սարքերի հետ, քիչ հիշողություն կզբաղեցնի, մատչելի կլինի բոլորի համար, բայց և կունենա դասապրոցեսը կազմակերպելու բոլոր անհրաժեշտ գործիքները, որտեղ ուսուցիչները, աշակերտները, և ծնողները կկարողանան ծանոթանալ և կիրառել ՏՀՏ գործիքները: ԿԳՄՍ նախարարությունը պետք է այս գործընթացի ներդնողը լինի և ունենա հստակ կանոնակարգեր, ընթացակարգեր ու մոթոդաբանություն:

- Չնայած ԿԳՄՍ նախարարության և ԿՏԱԿ-ի կողմից ստեղծվել է «heravar.armedu.am» հեռավար ուսուցման համալիր հարթակը, սակայն հետազոտությունը ցույց է տալիս, որ այն լայնորեն չի կիրառվում: Սա հիմնականում պայմանավորված է հարթակի մասին բավարար իրազեկում չապահովելով ու ուսուցիչների անտեղյակությամբ, ինչպես նաև օգտագործման տեսանկյունից մատչելիության ու արդյունավետության հետ կապված խնդիրներով: Հետազոտության շրջանակներում մանրամասն չի ուսումնասիրվել հարթակի որակը, արդյունավետությունը և օգտագործման հետ կապված խնդիրները, ուստի խորքային գնահատական չի տրվում և առաջ է քաշվում լրացուցիչ ուսումնասիրության կարիք:
- Covid-19-ի հետևանքով ուսուցիչները քայլեր ձեռնարկեցին սեփական կարողություններն ու հմտությունները զարգացնելու համար, ինչպես նաև դրան զուգահեռ ԿԳՄՍ նախարարությունը իր տարբեր ստորաբաժանումներորով և մի շարք այլ կրթական ու քաղ.հասարակության կառույցների հետ միասին ձեռնարկեցին վերապատրաստումներ, կարողությունների զարգացման գործընթացներ: Այդուհանդերձ, ուսուցիչների կարողությունների բացը և զարգացման կարիքը մնում է օրախնդիր, որի մասին բարձրաձայնում են թե՛ վերադաս կառույցների և քաղ. հասարակության ներկայացուցիչները, թե՛ աշակերտներն ու ծնողները, և թե՛ հենց իրենք՝ ուսուցիչները:
- Վերապատրաստումները պետք է նպատակային և աշխատանքում կիրառելի լինեն: Կարևոր է ոչ միայն համավարակի հետևանքով հեռավար կրթության համար անհրաժեշտ հմտությունների բացը լրացնելը, այլ ուսուցիչների ցկյանս ուսումնառության և մշտական վերապատրաստումների կազմակերպումը: Առցանց գործիքներից ու հարթակներից զատ, անհրաժեշտ է կազմակերպել նաև դասավանդման մեթոդների, փափուկ հմտությունների, համացանցի հիգիենայի, մեդիագրագիտության, քննադատական մտածողության վերաբերյալ վերապատրաստումներ, ինչպես նաև ընդհանուր զարգացում և իրազեկության բարձրացում տարբեր թեմաների վերաբերյալ:

## Առաջարկություններ

- ԿԳՄՍ նախարարության կողմից ներդնել հեռավար կրթության կազմակերպման գործընթացի հստակ կանոնակարգեր, ընթացակարգեր, մեթոդաբանություն, տեխնիկական ապահովում: Մշակել և հանրայնացնել կրթության կազմակերպման ցուցումների, մեթոդաբանություն և ուղեցույցներ՝ հաշվի առնելով հեռավար կրթության ընթացքում կուտակված փորձը:
- Դիտարկել հեռավար և առկա կրթության համադրման հնարավորությունը տարբեր առարկաների և դասարանների համատեքստում, մշակել և դպրոցներում ներդնել համապատասխան գործիքակազմ, իսկ ուսուցիչների կողմից ապահովել դրանց նպատակային կիրառությունը:
- Իրականացնել հեռավար ուսուցման ժամանակահատվածում ներառական կրթության շահառուների կարիքի գնահատում, ներդնել համապատասխան մեթոդներ և գործիքներ, որոնք կապահովեն հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթության պատշաճ իրականացումը:
- Իրականացնել հստակ կարիքի գնահատում՝ ապահովելով կրթության բոլոր մասնակիցների համար հեռավար կրթության տեխնիկական հասանելիության միջոցներ՝ էլեկտրոնային սարքեր, ինտերնետ կապ:
- Գնահատել ԿԳՄՍ նախարարության և ԿՏԱԿ-ի կողմից ստեղծված «heravar.armedu.am» հեռավար ուսուցման համալիր հարթակի արդյունավետությունը, լայնորեն կիրառման համար իրականացնել հարթակի մասին պատշաճ իրազեկում նհամապատասխան հմտությունների ուսուցում:
- Հանրակրթության բնագավառում ներդնել մեկ միասնական էլեկտրոնային հարթակ, որը համատեղելի կլինի էլեկտրոնային տարբեր սարքերի հետ, քիչ հիշողություն կզբաղեցնի, մատչելի կլինի բոլորի համար, բայց և կունենա դասապրոցեսը կազմակերպելու բոլոր անհրաժեշտ գործիքները: Ապահովել հարթակի վերաբերյալ գիտելիքների և իրազեկության բարձրացումը շահագրգիռ կողմերի համար:
- Ուսուցչի կարողությունների բացը լրացնելու համար թիրախավորել մանկավարժական բուհերի հզորացումը: Բարեփոխումներ իրականացնել մանկավարժական բուհերի չափորոշիչների, կրթական, ծրագրերի, դասավանդման մեթոդների և գործիքների առումով, կրթությունը համապատասխանեցնել արդի պահանջներին և մարտահրավերներին:
- Ներդնել ուսուցիչների ցկյանս ուսումնառության և մշտական վերապատրաստումների կազմակերպման մեխանիզմ, որը կապահովի

նպատակային և կիրառելի հմտությունների զարգացում: Ուսուցիչների մոտ մասնավորապես զարգացնել հետևյալ կարողությունները՝

- ՏՀՏ և առցանց հարթակների ու գործիքների կիրառում
  - Համատեղ աշխատանքի առցանց գործիքներ (օրինակ՝ Google-ի գործիքներ)
  - Առցանց հարցումների գործիքներ
  - Առցանց պրեզենտացիաների պատրաստում
  - Տվյալների վիզուալիզացում
  - Առցանց թեստերի, վիկտորինաների պատրաստում
- Դասավանդման նոր մեթոդներ
  - Նախագծահեն ուսուցում
  - Առցանց գործիքների կիրառումը առկա կրթության մեջ
  - Փոփոխությունների վրա հիմնված ուսուցում
  - Բանավեճի վրա հիմնված ուսուցում
  - Նորարարությունը ուսուցման մեջ
- Փափուկ հմտություններ
  - Պլանավորում,
  - Կազմակերպում,
  - Առաջնորդություն,
  - Հաղորդակցման հմտություններ,
  - ժամանակի կառավարում,
  - Բանակցությունների վարում
- Համացանցի հիգիենա, մեդիագրագիտություն,
- Քննադատական մտածողություն: